

13991

14305 2502

ԹԻՖԼԻՍԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը :

W220.

13991

Առաջին գրուխ:

Քաղաքական կառավարութեանի կազմութիւնը, գործերը  
և գործողութեանի ձևը :


§ 1. Թիֆլիսի քաղաքական կառավարութիւնը երկու մասն է բաժանուիւմ՝ ա. ընդհանուր—քաղաքի բոլոր հասարակութիւնների համար և բ. մասնաւոր—քաղաքի ղանաղան կարգ բնակիչների համար:

§ 2. Ընդհանուր քաղաքական կառավարութիւնը կազմվում է՝ ա. ընդհանուր քաղաքական ժողովից և բ. բարեկարգող քաղաքական կառավարութեանից, իր պաշտօնակալներով:

§ 3. Քաղաքի ղանաղան կարգ բնակիչների մասնաւոր կառավարութիւնը բաղկանում է՝ ա. ընտրվածների ժողովից և բ. մասնաւոր կառավարութիւններից:

Մ ա ն օ թ ու թ ի լ ն : Արհեստաւորների կառավարութիւնները (համքարները) մնում են վաղուցվան պէս իրանց կանոններով:

§ 4. Քաղաքագլուխը զլխաւորապէս լիակատար իշխանութիւն ունի բոլոր հասարակութեանի կողմից և էղուր համար նրա պարտականութիւնն է հողալ հասարակութեանի կարիքների և օգուտների համար:



ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ:

Ընդհանուր քաղաքական ժողովի կազմութիւնը, գործերը և գործողութենի ձևը:

§ 5. Ընդհանուր քաղաքական ժողովը կազմվում է նախագահ քաղաքապետից և անդամներից (старшоны и граждане), որոնք ընտրվում են քաղաքի բոլոր բնակիչներից: Ընդհանուր ժողովի գործառնությունի համար կգտնվի էստեղ քաղաքական ատենադպիր:

§ 6. Ընտրութիւններումը ձէն ունեցող քաղաքի բնակիչները բաժանվում են չորս կարգ՝ ա. տոնմական ազնւականներ, որոնք քաղաքումը անշարժ կայք ունին և կամ պարագում են վաճառականութենով կամ արհեստով, բ. անձնական ազնւականներ և տոնմական և անձնական պատուաւոր քաղաքացիներ, որոնք ունին քաղաքումը անշարժ կայք և կամ պարագում են վաճառականութենով կամ արհեստով, գ. քաղաքացիներ (մըքալաքներ և խալմտուհներ), որոնք ունին քաղաքումը անշարժ կայք և դ. Թիֆլիսի բոլոր բնակիչները, որոնք անշարժ կայք չունին, բայց քաղաքական հարկեր են տալիս: Էս չորս կարգի մարդկանցից 100—100 մարդ է ընտրվում մասնաւոր ժողովներ կազմելու համար և էս ընտրվածները իրանցից 25 հողի անդամացու են նշանակում ընդհանուր քաղաքական ժողովներումը: Բացի էս 100—100 հողուց ընտրվածները էլի երրորդ մասը կանդիդատներ են ջոկում, որ նրանք ընդհանուր քաղաքական ժողովներումը բունն անդամների տեղը, եթէ սրանք նշանակված ժամանակից առաջ որ և իցէ պատճառով թողնեն իրանց պաշտօնը:

§ 7. Ընդհանուր քաղաքական ժողովը, որովհետև բաղկանում է քաղաքի բոլոր բնակիչների ներկայացնողներից, էս-

գուր համար էլ քննում է քաղաքական հասարակութենին վերաբերեալ բոլոր գործերը և հասարակութենի կողմից ներգործում է բոլոր էն դիպուածներումը, երբ որ կանոնով նա պարտաւոր է հասարակական վճիռներ և կարգադրութիւններ անելու:

§ 8. Ընդհանուր ժողովի նիստը լինում է՝ ժամանակաւոր — վերսկարին և հոկտեմբերին և կարգիցը դուրս: Ժամանակաւոր նիստերը նշանակվում են՝ ա. բարեկարգող քաղաքական կառավարութենի հաշիւների և ելումտի ցուցակների քննելու, բ. քաղաքի ունեցած պարտքերի ծածկելու համար հնարներ գտնելու, գ. քաղաքի բնակիչների գրելու գիրքը և նմանապէս ընտրութիւններումը ձէն ունեցողների ցուցակները ստուգելու և հաստատելու և դ. առհասարակ քաղաքի բարեկարգութենին և քաղաքական տնտեսութենին վերաբերեալ առարկաների քննելու, իրան իրան նկատելով հասարակական օգուտները և կարիքները և կամ իշխանութենի առաջարկութիւններով: Կարգիցը դուրս նիստերը նշանակվում են միայն գաւառապետի կարգադրութենով՝ չտապով քննելու համար ամենահարկաւոր հասարակական գործերը:

§ 9. Թէ ժամանակաւոր և թէ կարգիցը դուրս նիստերի մասին յայտնվում է բոլորին բարեկարգող քաղաքական կառավարութենի ձեռով: Ժողովը չներկայանող անդամը պէտք է քաղաքապետին յայտնէ թղթով իր չգալու պատճառը: Ովոր չի կատարի էս կանոնը և թուղթ չի ուղարկի իր չգալու օրինաւոր պատճառների մասին, պատասխանատվութենի տակը կընկնի 1866 թւին տարված քրէական կանոնների 1436 յօդուածի հիման վրայ:

§ 10. Ընդհանուր քաղաքական ժողովը էն ժամանակն է օրինաւոր համարվում, երբոր կգտնվին էստեղ՝ քաղաքապետը, մասնաւոր կառավարութիւնների գլխաւորները և անդամների երրորդ մասը:

§ 11. Ընդհանուր քաղաքական ժողովների թէ ժամանակաւոր և թէ կարգիցը դուրս նշանակված նիստերումը կարելի է ժողովի հաճութենով հրաւիրել խորհրդակից լինելու և Կնպիսի մասնաւոր մարդիկ, որոնցից կարելի է յուսալ օգտակար բացատրութիւններ գործի մասին. բայց էդ հրաւիրվածները ձէնի իրաւունք չեն ունենալու:

§ 12. Ժամանակաւոր նիստերը գործերի մեծութենին մտիկ տալով և մանաւանդ հաշիւների և ցուցակների քննելու համար կարող են մինչև 15 օր շարունակվիլ, իսկ կարգից դուրս նիստերումը պէտք է քննվին միայն առաջարկված լսնդիրները և կարող են շարունակվիլ ոչ աւելի 7 օրից:

§ 13. Ընդհանուր քաղաքական ժողովը վաղօրօք քաղաքի ևլ ու մտի ցուցակների, բարեկարգող կառավարութենի հաւրանների, ընտրութենումը ձէն ունեցողների ցուցակների մասնաւոր քննելու և առհասարակ շատ մեծ գործերի համար՝ իր անդամներից առանձին կոմիտիաներ է սարգում: Եդ կոմիտիաները, եթէ հարկաւոր կհամարեն, կարող են նմանապէս իրանց նիստերումը հրաւիրել մասնաւոր մանդիկ՝ իրանց քննելու գործերը բացատրելու համար: Կոմիտիային յանձնուված բոլոր գործերը պէտք է կատարվին մինչև ընդհանուր քաղաքական ժողովի մէջ նշանակված նիստի ժամանակը:

§ 14. Ընդհանուր քաղաքական կառավարութիւնը վճուում է իրան պատկանած գործերը իր անդամների ձէների շատութենով: Ժաղովի վճիւնները կարելի է տղել տեղական գաղթութումը ուսերէն, տեղական լեզուով թարգմանութենի հետ:

§ 15. Ընդհանուր քաղաքական ժողովը իրանից կարգադրութիւններ չէ անում, այլ միայն հասարակական գործերի վճիւններ է գրում և յանձնում բարեկարգող քաղաքական կառավարութենին կատարելու համար և կամ եթէ կանոնով պահանջվում է՝ իշխանութենին ներկայացնելու համար: Եթէ բարեկարգող քաղաքական կառավարութիւնը վճիւնը կա-

տարելիս դժուարանում է, պէտք է էդուր մասին խմացում տայ ընդհանուր քաղաքական կառավարութենին և եթէ դրանից յետոյ էլ ընդհանուր ժողովը հարկաւոր չհամարէ իր վճիւնը փոխելու, էն ժամանակը բարեկարգող կառավարութիւնը կարող է ներկայացնել էդ իշխանութենին: Եդ իշխանութենին ներկայացնելու վճիւնների հետ բարեկարգող կառավարութիւնը պէտք է ուղարկէ և իր կարծիքը գործի մասին: Եթէ որ և իցէ պտածառով իշխանութիւնը չհաստատէ ընդհանուր քաղաքական ժողովի վճիւնը, էն ժամանակը էն վճիւն անկատար է մնում:

§ 16. Ընդհանուր քաղաքական ժողովը պէտք է քննէ քաղաքական հասարակական կառավարութենի պաշտօնակալ անձների էն գործունէութիւնները, որ վերաբերվում են հասարակական գործերին: Եթէ ժողովը նկատէ էդ գործերի մէջ մեծ զանցառութիւններ և անհաւատարմութիւններ, կարող է վճիւն տալ նրանց հրաժարելու մասին և դատաստանով նրանցից պահանջել քաղաքական դանձարանի քաշած վնասը: Եդ տեսակ վճիւնները կկատարվին միայն էն ժամանակը, երբ որ կհաստատվին Կովկասեան երկրի զլխաւոր կառավարութենի ձեռով, էս կանոնադրութենի 15-դ § ունը նշանակված հիման վրայ:

§ 17. Երբ որ ընդհանուր քաղաքական ժողովը պէտք է Կնպիսի գործեր քննէ, որոնց մէջ մասնակցութիւն կունենան կամ էդ ժողովի անդամները և կամ նրանց մօտիկ ազգականները, որոնց ժառանգութիւնը պէտք է հասնի կանոնով էն անդամներին, էն ժամանակն էն անդամները չեն կարող էլ պիսի գործերի քննող և դատաւոր լինիլ. և եթէ էդպիսի անդամների հեռացնելիս էնքան անդամ չմնայ ժողովումը, որքան հարկաւոր է գործի վճուելու համար, էդ դիպուածումը գործը յետաձգվում է մինչև հետեւալ նիստը և հրաւիրվում են էն օրը էնքան կանդիդատներ, որքան անդամներ են հեռացրած գործի քննելուց:

§ 18. Ընդհանուր քաղաքական ժողովը քաղաքագլխի համաձայնութենով կարող է առանձին կոմիտիաներ սարգել և նրանցը յանձնել քաղաքական կառավարութենի այլ և այլ մասնաւոր ճիւղերը անօրինելու, օրինակ՝ քուչաների լուսաւորութիւնը, սալայատակի շինութիւնը և կարգին պահելը, առհասարակ շինութիւնները և այլն: Էդ դիպուածներումը էդ կոմիտիաների անդամների պարտաւորութիւնը ընդհանուր քաղաքական ժողովը յանձնում է էդ գործերի համար աւելի ընդունակ կամ անդամներին, կամ նրանց կանդիդատներին, կամ բարեկարգող քաղաքական կառավարութենի անդամներին և կամ քաղաքի էսպիտի բնակիչներին, որոնք ընտրութենումը ձէն ունին: Էդ նպատակին հասնելու համար ընդհանուր քաղաքական ժողովը քաղաքագլխի համաձայնութենով կարող է առանձին պաշտօններ սահմանել, բայց առաջուց էդուր համար գլխաւոր իշխանութենից հրաման ստանալով:

**ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄՆ:**

Բարեկարգող քաղաքական կառավարութենի կազմութիւնը, գործերը և գործողութենի ձևը:

§ 19. Թիֆլիսի բարեկարգող քաղաքական կառավարութիւնը բաղկանում է՝ նախագահ քաղաքագլխից, ութը անդամներից, որոնք ընտրվում են քաղաքի բնակիչների ամեն կարգերից 2—2 հոգի և մէկ անդամից, որ նշանակվում է տէրութենից: Ութը անդամներից մէկը բարեկարգող կառավարութենի գանձապետի պաշտօնն է կատարում, իսկ մնացած 7 անդամները հերթով վարում են քաղաքի առևտրական և անտեսական պոլիցիայի գործերը: Բարեկարգող կառավարութենի անդամների մէջ պաշտօններ բաժանելու իրաւունքը քաղաքագլխինն է, որն որ իբրև նախագահ կար-

գաղրում է 1857 թւին տարած օրէնքների Բ. հատրի Ա. մասի ընդհանուր գաւառական կանոնադրութենի 90-դ յօդուածի հիման վրայ:

§ 20. Թիֆլիսի բարեկարգող քաղաքական կառավարութենի վարելու գործերն էն գործերն են, որ նշանակված են էլէլ 1840 թւի ապրիլի 10-ին հաստատված Թիֆլիսի քաղաքական հասարակական կառավարութենի համար, միայն էս կանոնադրութենի մէջ նշանակված և սրանից յետոյ գլխաւոր իշխանութենի արած փոփոխութիւնների բացառութենով:

§ 21. Բարեկարգող քաղաքական կառավարութիւնը գըտնվում է անընդմիջապէս գաւառապետի վերատեսչութենի տակը: Էն գործերը, որ վերաբերվում են քաղաքական անտեսութենին և հասարակական կառավարութե նին և կանոնով ներկայացվում են իշխանութենին քննելու, գաւառապետը բարեկարգող քաղաքական կառավարութենի վճռին համաձայն չգտնվելիս կարող է փոխել, եթէ քննելու առարկան իր կարգադրութենից է կախված և ներկայացնում է բարձրագոյն իշխանութենին իր ծանօթութի ճաների հետ միասին: Էսպիտի գործերը, որ գաւառապետի և բարեկարգող քաղաքական կառավարութենի մէջ և նմանապէս գաւառապետի և ընդհանուր քաղաքական կառավարութենի մէջ անհամաձայնութիւններ են ծագելցնում, վճռվում են վերջաւորապէս Արմիասեան փոխարքայի կարգադրութենով:

§ 22. Եթէ քաղաքական հասարակական կառավարութիւնը ուշայնէ և կամ անկատար թողնէ իշխանութենից յանձնված կարգադրութիւնների կատարելը և կամ էն հարկերը չժողովէ, որ կանոնով քաղաքի պարտաւորութիւնն է, էն ժամանակը գաւառական իշխանութիւնը պարտական է յիշեցնել էս բաները հասարակական կառավարութենին: Եթէ էս միջոցը չյաջողի, էն ժամանակը գաւառական իշ-

խանութիւնը քաղաքի ծախսով կատարումն է սալիս էն բոլոր կարգադրութիւններին և մի և նոյն ժամանակը յայտնում է Կովկասեան փոխարքային:

§ 23. Եթէ քաղաքական հասարակական կառավարութիւնը բարձի թողի անէ իշխանութենից յանձնուած գործերը, դաւառական իշխանութիւնը իրաւունք ունի յանդիմանութիւն անելու էդ գործերի կատարող պաշտօնակալներին, իսկ եթէ մեծ անկարգութիւններ և անհաւատարմութիւններ տեսնէ կարող է դատաստանի տակ զցել նրանց և եթէ հարկաւոր համարէ մի և նոյն ժամանակը պաշտօնից էլ արձակել, միայն Կովկասեան փոխարքայի կարգադրութեամբ:

§ 24. Բարեկարգող քաղաքական կառավարութեանումը իշխանութենից նշանակված անդամին, որն որ միւս անդամների հետ հաւասար իրաւունք ունի գործերի վճռելիս, յանձնվում է քաղաքական կառավարութենի գործավարութենի կարգին մտիկ տալը և կանոնով շարժվելը:

§ 25. Եթէ բարեկարգող քաղաքական կառավարութիւնը անկանոն, կամ իր իրաւունքիցը դուրս կարգադրութիւն անէ իշխանութենից նշանակված անդամը պէտք է յայտնէ էգուր մասին բարեկարգող քաղաքական կառավարութենին նիստի ժամանակը բերանացի և եթէ նրա կարծիքը չընդունվի, էն ժամանակը նա կարող է, եթէ հարկաւոր համարէ, թղթով բողբել նրանց կարգադրութենի վրայ և մի և նոյն ժամանակը պարտական է յայտնել էգուր մասին դաւառապետին:

§ 26. Բարեկարգող քաղաքական կառավարութիւնը գրադրութիւն է անում զանազան դատաստանատների և անձների հետ դաւառական և նահանգական դատաստանատների ընդհանուր կանոններով (1857 թ. ստված II հատորի I մասի ընդհանուր դաւառական կանոնադրութենի հիման վրայ): Իրաւարանութենի նախարարի ձեռի տակն էլսած անձները իշխանութիւն ունին բարեկարգող քաղաքական կառավարութենի վրայ էնպէս, ինչպէս և միւս զստաստանատների վրայ:

§ 27. Բարեկարգող քաղաքական կառավարութենի վճիռների և կարգադրութիւնների վրայ մասնաւոր մարդկանց դանդառները, որ բարձրագոյն իշխանութենից կախումն ունին, դաւառապետին է տրվում, որնոր էս կանոնադրութենի 21-դ §-ի մէջ ցոյց տված կանոնով է վարվում:

28. Բարեկարգող քաղաքական կառավարութենի մօտ զբռնվում են՝ 1.) քաղաքական որբերի հողաբարձութիւնը, 2.) աների կոմիսիան, 3.) առևտրական սրղլիցիան, 4.) տնտեսական սրղլիցիան և 5.) սուկցիտնի կամերան:

Բացի էդ բարեկարգող քաղաքական կառավարութենի ձեռի տակն են դանվում՝ 1.) կրղւած բարեխիղճ վկաներ կայքերի վեր գրելու և զին դնելու համար և 2.) երղւած քաղաքական գին դնողներ:

§ 29. Քաղաքական որբերի հողաբարձութիւնը բաղկանում է նախագահ քաղաքազլխից, կրկու անդամներից և առեւագայրից: Քաղաքական որբերի հողաբարձութիւնը, որ պէտք է հիմնկվան որբերի դատարանի տեղը բռնէ, ներգործում է 1855 թ. ապրիլի 24-ին հաստատված Թիֆլիսի որբերի դատարանի կանոնադրութենի հիման վրայ և մի և նոյն ժամանակը որբերի դատարանի ընդհանուր կանոնադրութենով ձեռնարկվելով:

§ 30. Քաղաքական որբերի հողաբարձութիւնը վարում է առ հասարակ բոլոր քաղաքի ընակիչների որբերի և նրանց կայքերի գործերը, բացի տոճմական աղւակամանների գործերը, որ ընդհանուր կանոնների հիման վրայ, աղւակամանների հողաբարձութենին են պատկանում:

§ 31. Տների կոմիսիան բաղկանում է նախագահ քաղաքազլխից, քաղաքի ընակիչների երեք առաջին կարգի մարդկանցից ընտրած 6 պատգամաւորից, (§ 6.) առեւագայրից և հաշւադահից: Տների հարկերը-պէտք է պահէ բարեկարգող քաղաքական կառավարութենի դանձապետը: Տների կոմիսիան

առժամանակ հիմնական կանոններով է վարվում: Ընդհանուր քաղաքական ժողովը իրաւունք ունի յետոյ ներկայացնել իշխանութենին իր կարծիքները եղ կանոնների փոփոխելու՝ տեղական պայմաններին և փորձերին նայելով:

§ 32. Առևտրական պոլիցիան վարվում է 1848 թ. յունվարի 24-ին Կովկասեան փոխարքայի հաստատված կանոնադրութենով: Առևտրական և փողոցի վերականգնները զբաւծվում են քաղաքապետի նշանակված բարեկարգող քաղաքական կառավարութենի անդամներից մէկի իշխանութենի տակը:

§ 33. Տնտեսական պոլիցիան բաղկանում է՝ 1.) քաղաքական կոմիտարներից, 2.) երգուած բարեխիղճ վկաներից, որոնք գտնվելու են կայքերի վեր գրելիս և զին դնելիս և 3.) քաղաքական երգուած գին դնողներից: Էս անձների վրայ վերահասութիւն ունենալը յանձնվում է քաղաքապետի ընտրութենով բարեկարգող քաղաքական կառավարութենի անդամներից մէկին: Էդ անդամի իշխանութենի տակն են տնտեսական պոլիցիայի բոլոր պաշտօնակալները և պարտաւոր են սրանք նրա բոլոր կարգադրութիւնները և հրամանները կատարելու: Եւ էդ անդամի հրամանները կարող է փոխել միայն քաղաքապետիսը, իր վկն առնելով էդ բանի պատասխանատվութիւնը:

§ 34. Առևկցիօնի կամերան բաղկանում է կառավարողից և երգուած առևկցիօնիսաններից: Սրանք ներգործում են Ս՝ Պետերբուրգի առևկցիօնի կամերայի համար տպված կանոնների հիման վրայ (1857 թ. տպված X հատորի II մասի քաղաքական կանոնների 2181 յօդուածի յաւելուած):

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄՆ ։

Մասնաւոր հասարակական կառավարութիւնների կազմութիւնը և գործերը ։

§ 35. Ընտրվածների մասնաւոր ժողովները կազմվում են՝ նախագահ—ամեն կարգի մարդկանցից ընտրած զլխաւորից և քաղաքի բոլոր բնակիչների իւրաքանչիւր կարգից ընտրվածներից, 6-դ §-ի հիման վրայ: Էս ժողովների գործավարութիւնը կատարում է ընդհանուր քաղաքական ժողովումը գտնվող աստենադպիրը: Բայց իւրաքանչիւր մասնաւոր ժողովը իրաւունք ունի գաւառապետի համաձայնութենով ընտրել և առանձին գործավար:

§ 36. Իւրաքանչիւր մասնաւոր ժողովը էն կարգի քաղաքի բնակիչների ներկայացնողներն են, որոնցից դրանք ընտրված են: Էսպուր համար էլ իւրաքանչիւր մասնաւոր ժողովը քննում է միայն էն գործերը, որ վերաբերվում են էն կարգ բնակիչներին, որոնցից նրանք ընտրված են: Մասնաւոր ժողովները երկու աստակ նպատակ ունին՝ 1.) իր կարգի մարդկանց վերաբերեալ գործերի քննելը և 2.) իրանց միջից ընդ անուր քաղաքական ժողովի համար որոշած անդամների և հասարակական կառավարութենի համար պաշտօնակալների ընտրելը:

Մ ա ն օ թ ու թ իւ ն : Քաղաքի բնակիչների առաջին և երկրորդ կարգի մարդկանցից ընտրվածները (§ 6.), որոնք հարկերից ազատ են, ժողովում են նշանակված ժամանակները իրանց միջից միայն ընդհանուր քաղաքական ժողովի համար անդամներ և քաղաքական հասարակական կառավարութենի համար պաշտօնակալներ ընտրելու համար:

§ 37. Մասնաւոր ժողովները իրանց գործերէքննելու համար նշանակում են իրանց նիստերը իրանց զլխաւորների կարգադրութենով, էդուր մասին ամեն անգամ յայտնելով

առաջուց քաղաքապետին: Իսկ ընտրութիւնները համար և ուրիշ կարգիցը դուրս դիպուածներումը մասնաւոր ժողովներէ նիստը նշանակուած է բարեկարգող քաղաքական կառավարութենի կարգադրութեանով և դաւառապետի հաստատութեանով:

§ 38. Մասնաւոր ժողովները կանոնաւոր են համարուած, եթէ էնտեղ նիստի ժամանակը գտնուել է ընտրութեան կրորդ մասը. իսկ հարկերի ցուցակին վերաբերեալ գործերը քննելիս, հասարակութեանց ում և իցէ դուրս անելիս, կամ ընդունելիս պէտք է գտնուի մասնաւոր ժողովների նիստումը ընտրութեան 2/3 մասը: Ժողովը չեկողները պէտք է իմաց տան իրանց չգալու պատճառը իրանց ժողովի զլխաւորին: Իսկ որոնք որ չեն իմաց տայ զլխաւորին իրանց չգալու մասին և օրինաւոր պատճառներ էլ չեն կարող ներկայացնել, կենթարկուին 1866 թ. սպիտակ քրէական օրէնքների 1971 օդուածումը նշանակուած պատժին (§ 9):

§ 39. Մասնաւոր ժողովները վճիռները, բաց ի ընտրութիւնների գործերին վերաբերեալները, որոնց մասին գրուած է յէս կանոնադրութենի երրորդ զլխումը, կանոնաւոր կհամարուին, եթէ ստորագրուած լինին նիստումը գտնուած ընտրութեան 2/3 մասի ձեռով:

§ 40. Մասնաւոր ժողովները իրանց իրանց ոչինչ կարգադրութիւն չեն անում, այլ գրում են միայն իրանց վճիռները և նրանց կատարումը յանձնում են իրանց կարգի բնակիչների կառավարութիւններին (составныя управы): Էդ բնակիչների ամեն կարգի կառավարութիւնները ներկայացնում են իշխանութենի հաստատելու վճիռները բարեկարգող հասարակական կառավարութեանին և դա 15-դ § ումը նշանակուած ձեռով ներկայացնում է էդուր մասին, դաւառապետին: Եթէ բնակիչների կարգերի կառավարութիւնները իշխանութեանին չներկայացնելու գործերի կատարելիս դժուարանան, էն

ժամանակը նրանք ներկայացնում են էդուր մասին մասնաւոր ժողովին և եթէ դա հարկաւոր չհամարէ փոխել իր կարգադրութիւնը, էն ժամանակը բնակիչների կարգի կառավարութիւնը ներկայացնում է էդուր մասին բարեկարգող քաղաքական կառավարութեանին, որն որ ներկայացնում է յիստոյ էդ գործերը իշխանութեանին 15-դ § ումը նշանակուած կարգով:

§ 41. Բնակիչների կարգերի կառավարութիւնները երկու են՝ մէկը քաղաքի երրորդ կարգի բնակիչների գործերի համար և երկրորդը քաղաքի չորրորդ կարգի բնակիչների գործերի քննելու (§ 6): Իւրաքանչիւր էդպիսի կառավարութիւնը բաղկանում է նախագահ—զլխաւորից, վից անդամներից, որոնք ընտրուած են մասնաւոր ժողովներումը և երկու ատենակալներից, որոնք ընտրուած են Թիֆլիսումը բնակվող օտար քաղաքացի և օտար ազգի վաճառականներից: Քաղաքացոյ, այսինքն, միջալաքների և ախարմտուների գործերի համար նշանակուած կառավարութիւնը կոչուած է՝ Առաջին բնակիչների կարգի կառավարութիւն: Իսկ հարկատու բնակիչների և քաղաքումը անչարժ կայք չունեցողների գործերի համար նշանակուած կառավարութիւնը կոչուած է՝ Երկրորդ կարգի բնակիչների կառավարութիւն:

§ 42. Էդ կառավարութիւնների գործերն են՝ 1.) մասնաւոր ժողովների վճիռների կատարելը, 2.) իւրաքանչիւր կառավարութենի ներքին կազմութեանին վերաբերեալ գործերը, 3.) էդ կարգի մարդկանց թաղաւորական, քաղաքական և հասարակական հարկերի տալու ձեռը, 4.) նրանց կայքերի և հասարակական գանձարանի մասին և 5.) իր անդամների մէջ պատահած էնպիսի վէճերի քննելը, որ չեն վերաբերուած դատաստանամաների քննելուն: Իւրաքանչիւր կառավարութեանի առանձին առարկաները նշանակուած են քաղաքի բնակիչների կարգերին նայելով:

§ 43. Քաղաքի բնակիչների կարգերի կառավարութիւնները բարեկարգող քաղաքական կառավարութենի իշխանութենի տակն են և պարտաւոր են կատարելու նրա բոլոր կարգադրութիւնները և հրամանները:

§ 44. Քաղաքի բնակիչները կարգերի կառավարութիւնների ձեռք տակն են պահելու՝ առանձին երեսփոխաններ իրանց օգնականներով և տասնապետները, որոնք պարտաւոր են կատարելու բնակիչների կարգերի կառավարութիւնների և պոլիցիաների կարգադրութիւնները:

### Երկրորդ գլուխ:

Քաղաքական կառավարութենի համար անդամներ ընտրելու և պաշտօնների տալու կարգը:

§ 45. Քաղաքի բնակիչներից ընտրվածներին (§ 6) ընտրում են քաղաքի բնակիչները յետևեալ կանոններով:

§ 46. Քաղաքի իւրաքանչիւր բնակիչը, որ պատկանում է 6-դ § ումը նշանակված կարգի մարդկանց, ընտրվածների ընտրող կարող է լինիլ՝

ա. Նթէ 21 տարեկանից պակաս չէ:

բ. Նթէ նա դատաստանուի չէ վատահամբաված, կամ կուտը չէ յայտնած և կամ ձէն տալու իրաւունքից չէ զրկված ընտրվածների հաստատված վճուով:

գ. Նթէ նա քաղաքումը էնպիսի կայք ունի, որ տարին 100 մանէթից պակաս արդիւնք չէ բերում:

դ. Նթէ նա առուտուրից կամ արհեստից 100 մանէթից պակաս արդիւնք չէ ստանում տարին և մի և նոյն մամանակը ունի իր սեպական տան կարող ու սարգ, կամ դուքան, և ե. Նթէ նա, բաց ի վերոյիշեալ պայմաններն ունենալու,

գրված է քաղաքի բնակիչների դավթարումը և կամ քաղաքի բնակիչ է համարվում ոչ պակաս երկու տարուց:

Ծ ա ն օ թ ու թ իւ ն: Դատաստանի օակն էլած անձների հասարակական ընտրութիւններումը մասնակից լինելու իրաւունքը նշանակված է 1857 թ. տպված III հատորի ընտրութիւնով ծառայութենի կանոնագրութենի 350 և 351 յօդուածների մէջ:

§ 47. Մնչարծ կայքի արդիւնքը որոշվում է տների, դուքանների և ուրիշ գործատուների գին գնելով, հարկ տալու համար: Առուտուրից ու արհեստից ստացած արդիւնքի բոլորը համար աչքի առաջ պէտք է ունենալ՝ 1.) Թիֆլիսումը դուքաններ և ուրիշ գործատուներ բաց անելու իրաւունքի համար տված առմանները, 2.) Արքունական պալատի տված վկայականները. իմիւրքներ ծախելու իրաւունքի համար, 3.) առանձին ցուցակով նշանակված հարկը, որ առնվում է աղնականներից և ուրիշ հարկ չտվող մարդկանց առուտուրի իրաւունքի համար և 4.) քաղաքի մէջ դրանված ամեն տեսակ գործատուները:

§ 48. Քաղաքումն անչարծ կայք ունեցող, կամ առուտուր անող, կամ արհեստով պարասող կանայքը, որոնք ձէնի իրաւունքը պէտք է ունենային ընտրութիւնների ժամանակը, նմանապէս և էն տղամարդիկը, որոնք հիւանդութենի կամ ծերութենի պատճառով չեն կարող գտնվիլ ընտրութիւնների մէջ, կարող են իրանց ձէնի իրաւունքը յանձնել էնպիսի անձներիին, որոնք ընտրութիւնների մէջ ձէն տալու իրաւունք ունին և կամ իրանց մօտիկ աղջականներին կամ բարեկամներին, որինակ՝ հօրը, պապին, աներոջը, հօրեղբօրը կամ մօրեղբօրը, որդուն, եղբօրը, եղբոր որդուն կամ քրոջ որդուն և կամ վնասային, եթէ միայն դրանք քաղաքական ժողովներումը ձէն տալու իրաւունք ունին:

§ 49. Զանազան դատաստանատները, ընկերութիւնները, վանքերը և եկեղեցիները, որոնք քաղաքում անշարժ կայք ունին, կամ առևտուրով և արհեստով են պարապում, իրաւունք ունին իրանց ձէնը յանձնել իրանց ներկայացնողին, ընտրութիւնումը մասնակից լինելու:

§ 50. Անբաժան անշարժ կայք ունեցողներին ընտրութիւններումը միայն մէկը ձէնի իրաւունք ունի և եզուր համար միւս մասնակիցներին դա հաւատարմութուղթ պէտք է ունենայ: Աշխարհազրական ցուցակումը մէկ գերդաստան ցոյց տված անձներից մէկը, միայն գերդաստանի ղլխաւորը, կարող է ընտրութիւնների մէջ ձէն ունենալ և կամ նրա հաւատարմութուղթով կարող է ձէն ունենալ էն գերդաստանի ուրիշ անդամը, որն որ չտիհաս է և 46-դ § ումը յիշված յանցանքներից հեռու է:

§ 51. Իւրաքանչիւր մարդ կարող է ունենալ միայն երկու անձնի հաւատարմութուղթ ընտրութիւնների մէջ մասնակից լինելու:

§ 52. Գեներալ-գաւառապետը, դաւառաստիտը, դաւառական կառավարութիւնի անդամները, պօլիցիմէյստերը և քաղաքական պօլիցիայի միւս պաշտօնակալները, ժանդարմների կորպուսի օֆիցերները, նմանապէս պրոկուրորը և նրա օգնականները էս պաշտօններումը դտնված ժամանակը, թէպէտ անշարժ կայք էլ ունենան քաղաքումը, ընտրութիւններումը ձէնի իրաւունք չունին:

§ 53. Ընտրութիւնների մէջ կարող են անդամացուներ ընտրվիլ բոլոր ձէնի իրաւունք ունեցող տղամարդիկը և նրանք, որոնք ձէնի իրաւունքը ստացել են իրանց մերձաւոր աղջկաններից կամ բարեկամներից:

§ 54. Ընտրվածների ցուցակները քննվում են էս կանոնադրութիւնի 8-դ և 13-դ §§ ների հիման վրայ ընդհանուր քաղաքական ժողովի ձեռով և իթէ կանոնաւոր դտնէ դա, էն

13991

ժամանակը ժողովը էն ընտրվածներին երդումն է կատարել տալիս, իրանց պարտականութիւնները անաչառ կատարելու և նրանց համար տպված կանոններին հնազանդվելու համար, յիտոյ նրանք առաջվան ընտրվածների տեղն են բռնում:

§ 55. Էս ձեռով քաղաքի ամեն կարգի բնակիչների ժողովները կազմելով, իւրաքանչիւր ժողովը ջսկ ջսկ ընդհանուր քաղաքական ժողովի համար անդամացուներ է ընտրում, որոնք իրա ժամանակին հին անդամների տեղն են բռնում:

§ 56. Թիֆլիսի հասարակական կառավարութիւնի բոլոր պաշտօնները տվում է քաղաքի ամեն կարգի բնակիչների ժողովի ընտրութիւնով, կամ մէկ քանի եղպիսի ժողովների ընտրութիւնով, իթէ էսպիսի պաշտօն է տվում մարդու, որի իրաւունքը քաղաքի բնակիչների մէկ քանի կարգերի վրայ է տարածվում:

Մ ա ն օ թ ու թ իւ ն: Հետեւալ §§ ներումը չիշված պաշտօնները՝ թէ դատաստանական և թէ պօլիցիական մասնրումը, գրամաթղթերի կառավարութիւնի և Պրիկադի մէջ, որ քաղաքական հասարակութիւններից են պաշտօնակատար ստանում, նմանապէս քաղաքի ամեն կարգի բնակիչների ժողովի կարողութիւնով են լրացնվում:

§ 57. Հասարակական պաշտօններ տալիս էս կանոնին պէտք է հետեւիլ՝

ա. Քաղաքիս բնակիչների իւրաքանչիւր կարգը իրաւունք ունի հասարակական պաշտօնակալ ընտրելու նրանց, որոնք բնակիչների թւումն են և ընտրութիւնի իրաւունք ունին:

բ. Քաղաքի բնակիչներից ոչ մէկը, բաց ի նրանց, որոնք առանձին կանոնադրութեկըվ հասարակական ծառայութիւններից ազատ են, իրաւունք չունի հասարակական պաշտօն ընդունելուց հրաժարվելու, առանց օրինաւոր և հաստատ պատճառների, օրինակ՝ թաղաւորական ծառայութիւնի, պետտիկ հիւանդութիւնի և ծերութիւնի պատճառով:



գ. Նթէ մէկը առաջին անգամ որ և իցէ պաշտօնակատար ընտրվի Էնպիսի ժամանակը, երբ որ նա առևտրական կամ ընտանեկան գործերի պատճառով հարկաւորութիւն ունենայ քաղաքից դուրս գնալու, կարող է, իր ընտրող ընակիչների կարգի առանձին կարգադրութենով, ազատվիլ ծառայութեանից:

դ. Ով որ ընտրութենով բարձր պաշտօն է վարել որոշված ժամանակ, նա կարող է ստորին պաշտօնի ընդունելուց հրաժարվիլ:

ե. Նա, որը որ առանց վերոյիշեալ պատճառների կհրաժարվի ընտրութենով պաշտօնի ընդունելուց, նա կպատժվի 1866 թ. ստրված քրէական կանոնադրութենի 1438 յօդուածի հիման վրայ:

զ. Չի կարելի ընտրել մի և նոյն տեղումը ծառայելու կամ Էնպիսի պաշտօնի մէջ ծառայելու, որ մէկը միւսից կախումն ունենայ՝ հօրը որդու հետ, աներոջը փեսայի հետ, ևղբայրներին եղբոր որդեբրանց կամ քրոջ որդեբրանց հետ:

է. Ոչ մէկ պաշտօնի համար չեն կարող ընտրվիլ հոգևրականները:

ը. Էս պայմանների կատարելիս, ընտրվածների ժողովը կարող է հասարակական կառավարութենի համար իր անդամներից պաշտօնակալներ ընտրել, էդ ղիպուածումը էդպիսի ընտրվածները մի և նոյն ժամանակը ընտրվածի կոչումն էլ պահպանում են:

և թ. Ընդհանուր քաղաքական ժողովի և բարեկարգող քաղաքական կառավարութենի ստենդարտները և միւս ուժեղ ստացող պաշտօնակալները կարող են քաղաքում անշարժ կայք ու արդիւնք չունենալ:

§ 58. Ամեն պաշտօնի համար ընտրվում է նմանապէս և կանդիդատ, որ նա հաստատված պաշտօնակալի հիւանդութենի կամ բացակայութենի ժամանակը կատարէ նրա պաշ-

1866

տօնը: Ինչպէս առաջինը, նմանապէս և երկրորդը մի և նոյն ժամանակն են հաստատվում իշխանութենի ձեռով:

Ծանօթութիւն: Էս կանոնի զօրութիւնը չէ տաբանվում ընտրվածների վրայ, որոնք պաշտօնակալ չեն համարվում:

§ 59. Քաղաքական ծառայութեանը դոմիլիոնները կարող են, իրանց ծառայութիւնը չթողած՝ քաղաքական հասարակական պաշտօններ ունենալ, եթէ նրանց գլխաւորները համաձայն լինին էդ բանին:

§ 60. Քաղաքադուլը կարող է ընտրվիլ ամեն կարգի մարդկանցից, եթէ միայն 25 տարուց պակաս չէ և քաղաքում 10,000 մանեթ արժեցող կայք ունի: Նրան ընտրում են բոլոր քաղաքի բնակիչները կարգ մարդկանցից ընտրվածները և հաստատվում է էդ պաշտօնումը Կովկասեան փոխարքայի ձեռով:

§ 61. Իւրաքանչիւր քաղաքի բնակիչների կարգի ընտրվածների ժողովը երկու երկու մարդ է ջոկում բարեկարգող քաղաքական կառավարութենի անդամացու: Էդ պաշտօնների համար ընտրվածներին գաւառապետն է հաստատում:

§ 62. Մասնաւոր ժողովների գլխաւորներին և երեսփոխներին ընտրում են քաղաքի իւրաքանչիւր կարգի բնակիչները և հաստատում է գաւառապետը:

§ 63. Քաղաքական որբերի հոգաբարձութենի անդամներին ընտրում են քաղաքի ամեն կարգի բնակիչները: բայ ի ժառանգական ազնւականները և հաստատում է գաւառապետը:

§ 64. Տների կոմիտայի պատգամաւորները ընտրվում են երկու երկու հոգի քաղաքի երեք առաջին կարգի բնակիչների ժողովի ձեռով անշարժ կայք ունեցողներից և հաստատվում են գաւառապետի ձեռով:

§ 65. Առևտրական և փողոցի վերատեսուչները ընտրվում են, ինչպէս գրված է ներքևը 89-դ §-ի մէջ, տեղական վաճա-

ուսկանների ձևով և հաստատուում են, առաջինը, այսինքն առևտրական վերատեսուչը՝ գաւառապետի ձևով, իսկ փողոցի վերատեսուչը բարեկարգող քաղաքական կառավարութենի ձևով:

§ 66. Երդուած բարեխիղճ վկաներին կայքերի վեր գրելու համար, երբուած քաղաքական զին դնողներին, առւելցիօնի կամերայի կառավարողին և երդուած առւելցիօնիստներին ընտրուած են քաղաքի բոլոր չորս կարգի ընակիչներից ընտրվածների ժողովները միասին և հաստատուում են դաւառապետի ձևով:

Մ ա ն օ թ ու թ ի Ն : Թէ քաղաքադուխը և թէ միւս վերոյիշեալ պաշտօնակալները ընտրվում են երկք տարով:

§ 67. Քաղաքուան ժամանակով կացող օտար քաղաքացիները և օտար ազգի վաճառականները եթէ ունին քաղաքուան անշարժ կայք կամ քաղաքական հարկեր են տալիս, ընտրուած են իրանցից երկու ատնակալ քաղաքի ամեն կարգի բնակիչների Առաջին և Երկրորդ կառավարութիւնների համար մէկ, երկու և կամ երեք տարով, ինչպէս կամինան և ինչպէս նշանակված է ներքերը 89-դ § ումը: Եղպիսի ընտրվածներին հաստատում է գաւառապետը:

§ 68. Միւս քաղաքական պաշտօնակալներին էսպէս են նշանակվում՝ 1.) քաղաքական կօմիսարներին ընտրուած են երեք տարով քաղաքի ամեն կարգի բնակիչները չորս մասնաւոր ժողովները և հաստատում է գաւառապետը: 2.) քաղաքական ատնադպրին նշանակուած է երեք տարով ընդհանուր քաղաքական ժողովը ընտրութենով և հաստատուում է գաւառապետի ձևով և 3.) բարեկարգող քաղաքական կառավարութենի, քաղաքական հոգարարձութենի և տների կօմիսիայի հաշւապահը և քաղաքի ամեն կարգի բնակիչների կառավարութիւնների գործակարները ընտրվում են բարեկարգող քա-

ղաքական կառավարութենի ձևով և հաստատուում են գաւառապետի կարգադրութենով:

Էս բոլոր անձները թաղաւորական ծառայութենի բոլոր իրաւունքներն ունին, ունիլ են ստանում հաստատված շահաւոյ և կարող են արձակվիլ իրանց պաշտօններից ամեն ժամանակ, թանմանած կարգով:

### Երրորդ գլուխ:

Ընտրութիւնների և նրանց ժողովների կարգը:

§ 69. Ընտրութիւնների համար ժողովները երկք տեսակ են՝ 1.) քաղաքի հասարակութենի ժողովը, այս ինքն ամեն ձէն ունեցողների ժողովը, 2.) քաղաքի այլ և այլ կարգ բնակիչներից ընտրվածների ժողովը և 3.) քաղաքի մէկ քանի կարգի բնակիչների ժողովը:

### ԱՌԱՋԻՆ ԲԱՍԱՆՈՒՄՆ:

§ 70. Քաղաքի հասարակութենի ժողովները կաղմվում են գաւառապետի կարգադրութենով ամեն երեք տարուց յետոյ միայն ամեն կարգի բնակիչներից ընտրվածների ընտրելու համար:

§ 71. Ընտրութենից առաջ վաղօրօք բարեկարգող քաղաքական կառավարութիւնը ընտրութիւններումը ձէնի իրաւունք ունեցողների ցուցակն է շինուած և ընտրութենից դոնեա երկու ամիս առաջ հրատարակվում է տեղական հանդամանքների յարմար եղանակով:

§ 72. Ցուցակների հրատարակելուց յետոյ, երկու շաբաթվան մէջ, բնակիչները իրաւունք ունին յայտնիլու բարեկարգող քաղաքական կառավարութ ենին կամ քաղաքադուխին էն ցու-

ցակների անկանառութիւնները և թերութիւնները: Արանից լեռոյ բարեկարգող քաղաքական կառավարութիւնը եթէ էս նկատուութիւնները ուղիղ գտնէ, պէտք է ուղղէ ցուցակները և ներկայացնէ ընդհանուր քաղաքական ժողովին էն նկատու-  
ղութիւնների հետ միասին, որ թողել է նա առանց ուշադրու-  
թեան:

§ 73. Ընդհանուր քաղաքական ժողովը եղ ցուցակների անտեղեւոյ և հաստատելոց յետոյ յետ է դարձնում բարե-  
կարգող քաղաքական կառավարութիւնը ընտրութենից մէկ ամիս առաջ, որ իրա ժամանակին կարգադրութիւն անվի ընտրողների հրահրելու մասին, մի և նոյն ժամանակը դա հրատարակում է և իր արած փոփոխութիւնները:

§ 74. Ընդհանուր քաղաքական ժողովի վճռի վրայ ան-  
բաւականութիւն անեցողը կարող է հրատարակելոց յետոյ 40 օրվան ժամանակամիջոցումը գանդատվիլ դաւառական կառավարութենին: Գաւառական կառավարութիւնը իր ընդ-  
հանուր աստանի մէջ պէտք է գտնէ եղ գանդատները և եթէ կանոնաւոր գտնէ, շուտով խնայում է տալիս իր վճիռը բա-  
րեկարգող քաղաքական կառավարութենին, ցուցակներումը հարկաւոր փոփոխութիւններն անկու:

§ 75. Եթէ որ և իցէ հանդամանքների պատճառով դա-  
ւառական կառավարութիւնը չվճռէ եղ գանդատները մինչև ընտրութիւնների ժամանակը, եղ ղիպուածումը ընտրութիւնը անկանոն կհամարվի միայն էն ժամանակը, երբ որ ընտ-  
րութենումը անկանոն մասնակցողներից բաց, ընտրվածները իրանց ստացած ձէնի առաւելութիւնը կորցնեն ընտրութենի ժամանակը:

§ 76. Ժողովը կանոնաւոր է համարվում, եթէ էնտեղ մաս-  
նակից էր ձէնի իրաւունք տնեցողների երրորդ մասը:

§ 77. Ետընտրումը նախագահութիւն է անում — քաղաքի հատարակութենի մէկ մասումը՝ քաղաքապետ իսը, իսկ միւս

մասումը նրա ընտրած քաղաքի բնակիչների ամեն կարգի ղլխաւորներից, կամ բարեկարգող քաղաքական կառավա-  
րութենի անդամներից մէկը:

§ 78. Խրաքանչիւր կարգի բնակիչները ջոկ են ընտրութիւն անում միւս կարգերումը չխառնվելով և եթէ խիստ շատ լինին, էն ժամանակը, ընտրութենի յարմարութենի համար, ամեն մէկ կարգը 600 մարդուց բաղկացած մասեր է բա-  
ժանվում: Խրաքանչիւր մասը էնքան ընտրվածներ է ջոկում, որքան որ պէտք է ընտրել բարեկարգող քաղաքական կա-  
ռավարութենի հաշու:

§ 79. Ընտրութենի վերջացնելուց յետոյ, ժողովի իւրաքան-  
չիւր մասի նախագահը բոլորի ներկայութենով ընտրվածների ցուցակն է շինում և ներկայացնում բարեկարգող քաղաքական կառավարութենին և սա, բոլոր մասերից եղ ցուցակների ստանալուց յետոյ, ուղարկում է 13-դ §-ի հիման վրայ, վերջա-  
ւորապէս ստուգելու համար, ընդհանուր քաղաքական ժո-  
ղովը:

Մ ա ն օ թ ու թ իւ ն : Էս կանոնադրութենի գործ դնելու  
օկղբին ընտրութիւններին վերաբերեալ կարգադրութիւնները  
թէ ընտրվածների ցուցակների ստուգելու և թէ կատարումը  
տալու մասին, յանձնվում է մէկ առանձին կոմիտային, որ  
կկաղմվի դաւառապետի ներկայացրած և կովկասեան փո-  
խարքայի հաստատած մարդկանցից:

§ 80. Ընտրողների ժողովը միայն ընտրվածների ընտրու-  
թիւնը կատարելուց աւելի իրաւունք չունի ուրիշ որ և իցէ  
ստարկայի մասին քննութիւն կամ կարգադրութիւն անե-  
լու:

§ 81. Ետընտրումը անկարգութիւն անողները կպատժվին  
1866 թւին տպված քրէական օրէնքների 1435 և 1437 յօդ-  
ուածները հիման վրայ:

§ 82. Եթէ ընտրութիւններումը արած խարդախութիւն-

ները յայտնվին, էդուր համար անողը պատժուում է 1866 թւին տարված քրէական օրէնքների 1416 և 1425 յօդուածների հիման վրայ: Ընտրողներին դուշապիտու համար, ժողովի նախագահը ընտրութենից առաջ կարդում է էդ յօդուածները:

§ 83. Ընդհանուր հասարակութիւնի արած ընտրութիւնը պէտք է վերջանայ 15 օրվան մէջ: Էդ ժամանակամիջոցը կարող է էլի շարունակվիլ Կովկասեան փոխարքայի կարգադրութենով, կթէ շատ սաստիկ հարկաւորութիւն լինի:

**ԵՐԿՐՈՐԳ. ԲԱԺԱՆՈՒՄՆ:**

**Ընտրվածների ժողովները ընտրութիւն անելու համար:**

§ 84. Ընտրվածների ժողովը կանոնաւոր կհամարվի, եթէ դրա մէջ մասնակից էր գոնեա ընտրողների երրորդ մասը:

§ 85. Խւրաքանչիւր ընտրվածների ժողովումը նախագահութիւն է անում բնակիչների կարգի գլխաւորը, որն որ ընտրութենի մասին հասարակութիւնների ժողովներումը նախագահութիւն անողների պէս իրաւունքներ և պարտաւորութիւններ ունի: Աթէ ընտրութիւնը կատարում են բնակիչների երկու կամ երեք կարգերի ժողովները միասին (§ 56), էն ժամանակը առաջին դիպուածումը, այս ինքն, կը բնակիչների երկու կարգերի ժողովներն են ընտրութիւն անում միասին, նախագահութիւն է անում էստեղ բարեկարգող քաղաքական կառավարութենի անդամներից մէկը: Իսկ երկրորդ դիպուածումը, այս ինքն, կը որ բնակիչների երեք կարգերի ժողովներն են ընտրութիւն անում միասին—նախագահութիւն է անում էստեղ քաղաքագլուխը:

§ 86. Ընտրվածների ժողովներումը ընտրութիւնը կատարվում է ծածկած քուէարկութենով, էս բանի համար սահմանած կարգով:

§ 87. Ընտրվածների խւրաքանչիւր ժողովումը ընտրութիւնների ժամանակը ներկայէ գտնվում գլխաւոր կառավարութենից նշանակված անձը, ժողով վերահասութիւն ունենալու և կասկածներ ծագելիս կանոնները բացատրելու: Էս անձը, որն որ պրոկուրորի պաշտօնն է կատարում էս դիպուածումը, յայտնում է իր կարծիքը, 1857 թւին տարված ընտրութենով ծառայութենի կանոնադրութենի օրէնքների III հատորի հիման վրայ, էն ժամանակը, երբ ժողովի նախագահը հարցնէ նրան:

§ 88. Անդամացու ընտրվածների ցուցակները ուղարկվում են բարեկարգող քաղաքական կառավարութիւնը, որն որ ստուգելուց յետոյ, իր ժամանակին կատարումն է տալիս 54-դ §-ի հիման վրայ: Իսկ հասարակական զանազան պաշտօնների համար ընտրվածների ցուցակը բարեկարգող քաղաքական կառավարութենի ձեռով ուղարկվում է դաւառապետին, նրանից կախված կարգադրութիւնն անելու:

**ԵՐԿՐՈՐԳ. ԲԱԺԱՆՈՒՄՆ:**

**Մէկ քանի կարգ բնակիչների մասնաւոր ժողովները ընտրութենի համար:**

§ 89. Մասնաւոր ժողովները լինում են՝ 1.) քաղաքի մէջ գտնված օտար քաղաքացի և այլ արգի վաճառականներից նշանակված քաղաքի բնակիչների կարգի կառավարութենի համար—ատենակալներ ընտրելու համար (§§ 41 և 67) և 2.) փողոցներումը և հրապարակներումը մէկ տեսակ առուտոր անող տեղական վաճառականների կողմից առևտրական և փողոցի վերատեսուչներ ընտրելու (§65):

§ 90. Բոլոր մասնաւոր ժողովները նշանակվում են բարեկար-

դող քաղաքական կառավարութենի կարգադրութենով և նրանց վերաբերվում են բոլոր վերոյիշեալ կանոնները, որ թանձրմանված են քաղաքական ընդհանուր ժողովների համար:

### Չորրորդ գլուխ:

Քաղաքական հասարակական ծառայութենի իրաւունքները և արտօնութիւնները:

§ 91. Թիֆլիսի քաղաքական հասարակական կառավարութենի մէջ պաշտօններ ունեցողները, բաց ի առ հասարակ ընտրութենով քաղաքական ծառայութենին կանոնով տված իրաւունքները (1857 թւին տպված ընտրութենով ծառայութենի կանոնադրութենի օրէնքների III հատորի հիման վրայ), ունին և էս հետեւեալ արտօնութիւնները:

§ 92. Քաղաքագլուխը համարվում է VI-դ կարգումը, ընդհանուր քաղաքական ժողովի ատենադպիրը VII-դ կարգումը բարեկարգող քաղաքական կառավարութենի և քաղաքական կառավարութենի և քաղաքական հոգաբարձութենի անդամները, աների կոմիտայի պատգամաւորները և քաղաքի բնակիչների կարգի գլխաւորները համարվում են VIII կարգումը, բարեկարգող քաղաքական կառավարութենի, քաղաքական հոգաբարձութենի և աների կոմիտայի ատենադպիրները, ատկցիօնի կամերայի կառավարիչն ու հաշւապահները VIII-դ կարգումը, քաղաքական կոմիտարները, առևտրական վերաատեսչը, կապիտալ նրազարակական վեր գրելու համար նշանակված բարեխիղճ վկաները, երդուած ղին դժողները և ատկցիօնիտանները IX-դ կարգումը, իսկ փողոցի վերատեսուչները XIV-դ կարգումը:

§ 93. Քաղաքական ծառայութենումը դանվածները ունին

ներքին գործերի նախարարութենի համար նշանակված հագուստը (մուշղիբը):

§ 94. Քաղաքական ծառայութենումը դանված մէկ քանի պաշտօնակախներին քաղաքական արդիւնքներից առանձին շտատով ուժիկ է տվում:

§ 95. Ընդհանուր քաղաքական կառավարութիւնը, եթէ հարկաւոր և կարելի համարէ քաղաքական արդիւնքներին մտիկ տալով կարող է ուժիկ նշանակել քաղաքական կառավարութենումը դանված միւս ծառայողների համար էլ:

Ի-Կ-Կ-Կ Գ-Կ-Կ-Կ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ՄԵՇՈՒԹԵՆԻ Կ-Կ-Կ-Կ  
« Հաստատում եմ իբրև փորձ »:

Պետերգոֆումը

օգոստոսի 11-ին

1866.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ  
Сентября 20 дня 1866 г

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ  
ԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ



MAL014577